ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

« 30 » ----04---- 2020թ. N ----------

Ձեր ----------

<<Հետաքննող լրագրողներ>> հասարակական
կազմակերպության HETQ.am լրագրող

Տիրայր Մուրադյանին

ք.Երևան, Բուզանդի փողոց, 1/3, 8-րդ հարկ /էլ. Յոստ՝ tirayrmuradyan@gmail.com/

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրված Ձեր 28.04.2020թ. հարցումը ստացվել և քննարկվել է ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունում:

Հայտնում եմ, որ Արմավիրի մարզի Զարթոնք գյուղում 2019թ. ապրիլի 12-ին և 13-ին տեղի ունեցած միջադեպի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել են քրեական գործեր, նույն օրը հիշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

Նախաքննության ընթացքում երկու անձ ներգրավվել է որպես մեղադրյալ՝ համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 285-րդ հոդվածի 4-րդ մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

31.10.2019թ. վարույթն իրականացնող՝ ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Բաղդասար Կիրակոսյանի կողմից որոշում է

կայացվել քրեական գործով վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի /հանցակազմի բացակայության, վնաս պատճառված արարքը իրավաչափ համարվելու և դիմողի բողոքի բացակայության/ հիմքով կարճելու մասին:

2019թ. հունվար ամսից մինչ օրս, ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետի պաշտոնը զբաղեցնում է արդարադատության առաջին դասի խորհրդական Սամվել Տոնոյանը:

2019թ. մարտի 11-ին Արմավիրի մարզի Զարթոնք գյուղի 6 բնակիչների հաղորդման հիման վրա 21.03.2019թ. ՀՀ ոստիկանության Մեծամորի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, այն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն և ընդունվել է վարույթ:

15.04.2019թ. որոշում է կայացվել Զարթոնք համայնքի նախկին ղեկավարին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Քրեական գործով իրականացվել են մեծածավալ քննչական ու դատավարական գործողություններ: Քննության առարկա են դարձվել նաև ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից Զարթոնք Համայնքում իրականացված ուսումնասիրության և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ տեղեկանքն ու դրան կից փաստաթղթերը:

Ինչ վերաբերվում է հնարավոր հանցանքները, համայնքին, պետությանը պատճառված վնասի չափը գնահատելուն, վնասը վերականգնելուն, ինչպես նաև հիշյալ գործով և 2020թ. հունվարի 3-ին Արմավիրի մարզի Զարթոնք գյուղում տեղի ունեցած միջադեպի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցված քրեական գործով վարույթն իրականացնող քննիչների տվյալները տրամադրելուն, ապա հայտնում եմ, որ քրեական գործով ներկայում այդպիսի տեղեկատվություն տրամադրելու անհրաժեշտություն ՀՀ քննչական կոմիտեն չի տեսնում՝ նկատի ունենալով, որ կխախտվի քրեական դատավարության մասնակիցների մրցակցության սկզբունքը, բացի այդ, կհրապարակվի նախաքննության գաղտնիք պարունակող տեղեկատվություն:

Հարգանքով՝

Պետ, արդարադատության
առաջին դասի խորհրդական **Ս.Հ.Մաթևոսյան**